ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/27-1

ք. Երևան «15» 06 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի՝ Գագիկ Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արարատ Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Պայմանագրով **երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:**

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 613740 (վեց հարյուր տասներեք հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Ընդ որում՝

1-ին չափաբաժին 54100 (հիսունչորս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,
2-րդ չափաբաժին 55150 (հիսունհինգ հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ,
3-րդ չափաբաժին 40940 (քառասուն հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ,
5-րդ չափաբաժին 62810 (վաթսուներկու հազար ութ հարյուր տաս) ՀՀ դրամ,
6-րդ չափաբաժին 41680 (քառասունմեկ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ,
7-րդ չափաբաժին 43250 (քառասուներեք հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ,
8-րդ չափաբաժին 30810 (երեսուն հազար ութ հարյուր տաս) ՀՀ դրամ,
9-րդ չափաբաժին 32500 (երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
10-րդ չափաբաժին 45680 (քառասունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ,
11-րդ չափաբաժին 57890 (հիսունյոթ հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ,
12-րդ չափաբաժին 55620 (հիսունհինգ հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ,
13-րդ չափաբաժին 57980 (հիսունյոթ հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ,
14-րդ չափաբաժին 35330 (երեսունհինգ հազար երեք հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: **Ընդ որում՝ «ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու մասին» ՀՀ օրենքով և ՀՀ պետական եկամուտների նախարարի 15.09.2000թ. N02/1054 հրամանով հաստատված հրահանգով կիրառվում է ԱԱՀ-ից ազատման արտոնությունը, որով գործում է ավելացված արժեքի հարկից ազատման պայմանը:**

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

---

[22] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գրիհով Գեո» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ք Երևան, Հ. Քոչարյան 27/36
Կառավարական տուն 2,	Հեռ.՝ 095-63-06-40
ՀՀ ֆինանսների նախարարության	Էլ. Փոստ՝ vram1867@gmail.com
գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900000908153	1570005321090100
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00060564

Գլխավոր քարտուղար՝

---------- **Գ. Սաֆարյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

---------- **Ա. Եսայան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1

«15» «06» 2022 թ. կնքված

«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/27-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության								
հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդ-հանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Մատուցման	
							հասցեն	ժամկետը
			Գնման առարկա է հանդիսանում՝				Ըստ օբյեկտների	
1	71351540/10	**տեխնիկական հսկողության ծառայություններ-1**	«Վանաձորի Ա. Պուշկինի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**54100**	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 23	Ծառայության մատուցումը սկսվում է 2022թ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և իրականացվում է կրթական օբյեկտների հիմնանորոգման և բարելավման աշխատանքներին զուգահեռ:
2	71351540/11	**տեխնիկական հսկողության ծառայություններ-2**	«Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**55150**	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Զորավար Անդրանիկի 71	
3	71351540/12	**տեխնիկական հսկողության ծառայություններ-3**	«Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**40940**	ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Սուրբ Նշանի 39	
5	71351540/14	**տեխնիկական հսկողության ծառայություններ-5**	«Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**62810**	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 4, Զեյթունի ¾	
6	71351540/15	**տեխնիկական հսկողության ծառայություններ-6**	«Ստեփանավանի Ս. Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**41680**	ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Բաղրամյան 67	

7	71351540/16	**տեխնիկական հսկողության ծառայություններ-7**	«Վանաձորի Պ. Սևակի անվան թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**43250**	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 2, ՔՇՀ 4, ՈՒկրաինական պող.10-2	
8	71351540/17	**տեխնիկական հսկողության ծառայություններ-8**	«Լեռնապատի Ե. Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**30810**	ՀՀ Լոռու մարզ, գ. Լեռնապատ, 30-րդ փողոց	
9	71351540/18	**տեխնիկական հսկողության ծառայություններ-9**	«Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	1	**32500**	ՀՀ Լոռու մարզ, գ.Սարատովկա	
10	71351540/19	**տեխնիկական հսկողության ծառայություններ-10**	«Սպիտակի Շառլ Ազնավուրի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**45680**	ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Պանրագործների 44 փող.	
11	71351540/20	**տեխնիկական հսկողության ծառայություններ-11**	«Ալավերդու Ս. Սպանդարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**57890**	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Էնգելսի 2/1	
12	71351540/21	**տեխնիկական հսկողության ծառայություններ-12**	«Շամլուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**55620**	ՀՀ Լոռու մարզ, գ. Շամլուղ 8-րդ փողոց, շենք 1, 2	
13	71351540/22	**տեխնիկական հսկողության ծառայություններ-13**	«Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**57980**	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սարահարթ 2/26ա	
14	71351540/23	**տեխնիկական հսկողության ծառայություններ-14**	«Սպիտակի Դ. Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը՝ համաձայն տեխնիկական առաջադանքի:	դրամ	1	**35330**	ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան	

Տեխնիկական առաջադրանք

Նախատեսվում է.

- Հիմնանորոգող կազմակերպության կողմից Պատվիրատուին աշխատանքները հանձնելու վերաբերյալ համապատասխան ակտերի և արձանագրությունների ստուգում, կազմում, ստորագրում: Հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո Ծառայության մատուցման հանձնման-ընդունման արձանագրության հետ հաշվետվության ներկայացում՝ վերականգնման աշխատանքների, (այդ թվում՝ ծածկված աշխատանքների) թվային լուսանկարների, կատարված աշխատանքների սխեմատիկ գծապատկերների ներառմամբ՝ ըստ սահմանված կարգի և լիազորությունների:
- Արտահերթ ստուգումների կատարում՝ Պատվիրատուի պահանջով:
- Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N 44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:

Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Գ. Սաֆարյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- **Ա. Եսայան**

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2

«15» «06» 2022 թ. կնքված

«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/27-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										
հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71351540/10	**տեխնիկական հսկողության ծառայություններ-1**	3787	24345	24345	24345	54100	54100	54100	**54100**
2	71351540/11	**տեխնիկական հսկողության ծառայություններ-2**	3860.5	24817.5	24817.5	24817.5	55150	55150	55150	**55150**
3	71351540/12	**տեխնիկական հսկողության ծառայություններ-3**	2865.8	18423	18423	18423	40940	40940	40940	**40940**
5	71351540/14	**տեխնիկական հսկողության ծառայություններ-5**	4396.7	28264.5	28264.5	28264.5	62810	62810	62810	**62810**
6	71351540/15	**տեխնիկական հսկողության ծառայություններ-6**	2917.6	18756	18756	18756	41680	41680	41680	**41680**
7	71351540/16	**տեխնիկական հսկողության ծառայություններ-7**	3027.5	19462.5	19462.5	19462.5	43250	43250	43250	**43250**
8	71351540/17	**տեխնիկական հսկողության ծառայություններ-8**	2156.7	13864.5	13864.5	13864.5	30810	30810	30810	**30810**

9	71351540/18	**տեխնիկական հսկողության ծառայություններ-9**	2275	14625	14625	14625	32500	32500	32500	**32500**
10	71351540/19	**տեխնիկական հսկողության ծառայություններ-10**	3197.6	20556	20556	20556	45680	45680	45680	**45680**
11	71351540/20	**տեխնիկական հսկողության ծառայություններ-11**	4052.3	26050.5	26050.5	26050.5	57890	57890	57890	**57890**
12	71351540/21	**տեխնիկական հսկողության ծառայություններ-12**	3893.4	25029	25029	25029	55620	55620	55620	**55620**
13	71351540/22	**տեխնիկական հսկողության ծառայություններ-13**	4058.6	26091	26091	26091	57980	57980	57980	**57980**
14	71351540/23	**տեխնիկական հսկողության ծառայություններ-14**	2473.1	15898.5	15898.5	15898.5	35330	35330	35330	**35330**
ԸՆԴԱՄԵՆԸ			**42961.8**	**276183**	**276183**	276183	**613740**	**613740**	**613740**	**613740**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Գ. Սաֆարյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- **Ա. Եսայան**

(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՁՆԱՐԱՐԱԳԻՐ ԱՆԴՈՐԱԳԻՐ N 000661 [1555484952]

PAYMENT ORDER RECEIPT

Ամերիաբանկ ՓԲԸ Արշակունյաց մասնաճյուղ — ՊԿ\ID 870

Ameriabank CJSC Arshakunyats Branch — Ամսաթիվ\Date 13/06/22 20:55

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1570005321090100	900008000664	AMD 61,374.00

Վճարող\Remitter
ԳՐԻՀՈՎ ԳԵՈ ՍՊԸ
GRIHOV GEO LLC
Անձը հաստ.փաստթ.\ID Number 02A047292 25/02/2000
Վճարողի բանկ\Remitter's Bank
Ամերիաբանկ
AMERIABANK CJSC
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9900060564

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

Գումարը բառերով\Amount in Words
Վաթսունմեկ հազար երեք հարյուր յոթանասունչորս դրամ
Նպատակ\Details
ՀՀԿԳՄՍՆՄԱԶԲ -22/27-1 ծածկագրով պայմանգրի ապահովում

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission
ԳանձումII\CommissionII	1570005321090100	AMD 500.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Հինգ հարյուր դրամ

Կատարող\Maker Մարիամ Սեդրակյան — Կ.Տ. ST.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՁՆԱՐԱՐԱԳԻՐ ԱՆԴՈՐԱԳԻՐ N 000660 [93924845]

PAYMENT ORDER RECEIPT

Ամերիաբանկ ՓԲԸ Արշակունյաց մասնաճյուղ — ՊԿ\ID 870

Ameriabank CJSC Arshakunyats Branch — Ամսաթիվ\Date 13/06/22 20:54

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1570005321090100	900008000698	AMD 92,061.00

Վճարող\Remitter
ԳՐԻՀՈՎ ԳԵՈ ՍՊԸ
GRIHOV GEO LLC
Անձը հաստ.փաստթ.\ID Number 02A047292 25/02/2000
Վճարողի բանկ\Remitter's Bank
Ամերիաբանկ
AMERIABANK CJSC
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9900060564

Շահառու\Beneficiary
Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձևով, ՀՀՖԻՆՍՆԵՐԻ նախարարություն

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

Գումարը բառերով\Amount in Words
Իննսուներկու հազար վաթսունմեկ դրամ
Նպատակ\Details
ՀՀԿԳՄՍՆՄԱԶԲ -22/27-1 ծածկագրով պայմանգրի որակավորման ապահովում

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission
ԳանձումII\CommissionII	1570005321090100	AMD 500.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Հինգ հարյուր դրամ

Կատարող\Maker Մարիամ Սեդրակյան — Կ.Տ. ST.

ԿԳՄՍՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաֆարյան,

Ի լրումն մեր՝ 13.06.2022թ. գրության հայտնում եմ, որ ներկայացված թիվ «**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/27-1**» ծածկագրով պայմանագրի և կանխիկ փողի ձևով վճարված որակավորման և պայմանագրի ապահովումների հանձնարարգերում մուտքագրվել է թիվ «**ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-22/27-1**» ծածկագիրը:

Խնդրում եմ Ձեզ վճարումն ընդունել, որպես թիվ «**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/27-1**» ծածկագրով պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումներ:

«ԳՐԻՀՈՎ ԳԵՈ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Եսայան

«ГРИХОВ ГЕО»
«GRIHOV GEO»
00060564

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF RA

Մուտք N 3678/22
«15» 06 2022 թ.